



ՄԷԿ ԿԱՂՐ 15^{րդ}
ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ
ՀՈՒՆԻՍ 2 - 8, 2017, Երևան, Հայաստան

ՓԱՌԱՏՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ` 02.06.2017, ԺԱՄԸ` 19:00
ՆՓԱԿ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ՓԱՎԱՏՈՍ ԲՅՈՒՋԱՆԴԻ 1/3

Փառատոնի նախապատրաստական շրջանի ամփոփում:
Փառատոնին մասնակցության հայտ են ներկայացրել 364 ֆիլմեր: Ընտրական շրջանի արդյունքներով, փառատոնի ընթացքում կցուցադրվեն 80 ֆիլմ, որից 68-ը մրցույթում, 12-ը հատուկ ծրագրերով:

Մասնակցում են 26 երկիր - Հայաստան, ԱՄՆ, Ավստրալիա, Բանգլադեշ, Բելգիա, Բրազիլիա, Բուլղարիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Իրան, Իրաք, Խորվաթիա, Կանադա, Կոլումբիա, Հնդկաստան, Մակեդոնիա, Միացյալ Թագավորություն, Շվեդիա, Շվեյցարիա, Չինաստան, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Ֆինլանդիա, Ֆրանսիա:

ՄԷԿ ԿԱՂՐ ՄԷԿ ՐՈՊԵ անվանակարգ - 33 ֆիլմ, 14-ը կներկայացնեն Հայաստանը:
ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐ անվանակարգ - 25 ֆիլմ, 11-ը կներկայացնեն Հայաստանը:
ԿԻՆՈ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ անվանակարգ - 10 ֆիլմ, 1-ը կներկայացնի Հայաստանը:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ`

1. ՄԷԿ ԿԱՂՐ ՄԷԿ ՐՈՊԵ անվանակարգ

Լավագույն ՄԷԿ ԿԱՂՐ ՄԷԿ ՐՈՊԵ - արձանիկ և դիպլոմ
Լավագույն հայկական ՄԷԿ ԿԱՂՐ ՄԷԿ ՐՈՊԵ - արձանիկ և դիպլոմ, 100 000 դրամական մրցանակ ժյուրիի հատուկ հիշատակումներ:

ԳԼՆԱԿՈՐ ԺՅՈՒՐԻ

Ժյուրիի նախագահ` Արմինե Անդա (պրոդյուսեր, դերակատար, սցենարիստ)
Ժյուրիի անդամներ` Վահե Բուդուճյան (արվեստագետ), Արման Երիցյան (վավերագրական ֆիլմերի ռեժիսոր, կինոարտադրող), Հրանտ Վարդանյան (կինոռեժիսոր, կինոարտադրող)

2. ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐ անվանակարգ

Լավագույն կարճ ֆիլմ - արձանիկ և դիպլոմ
Լավագույն հայկական կարճ ֆիլմ - արձանիկ և դիպլոմ, 200 000 դրամական մրցանակ ժյուրիի հատուկ հիշատակում:

ԺՅՈՒՐԻ

Ժյուրիի նախագահ` Դավիթ Մաթևոսյան (ռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր)
Ժյուրիի անդամներ` Դավիթ Ստեփանյան (վավերագրող կինոռեժիսոր), Րաֆֆի Նիզիբիյան (կինոարտադրող, ստեղծագործական տնօրեն)

3. ԿԻՆՈ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ անվանակարգ

Փառատոնի հիմնադիր նախագահի մրցանակը - արձանիկ և դիպլոմ
Գագիկ Ղազարե (կինոռեժիսոր, կինոարտադրող):

4. ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Տրվում է հայկական կինոարտադրության առաջընթացին ակնառու ներդրում բերած անհատին:
“ՄԷԿ ԿԱՂՐ” ԿՅՄՓ

5. ՄԷԿ ԿԱՂՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Լավագույն հայկական մեկ րոպե ֆիլմ` 100 000 դրամ
Լավագույն հայկական կարճամետրաժ ֆիլմ` 200 000 դրամ

2014թ.-ին ՄԷԿ ԿԱՂՐ փառատոնի հիմնադիրները նախաձեռնեցին մրցույթային երկու անվանակարգերում հայկական արտադրության ֆիլմերի համար մրցանակային դրամական ՖՈՆԴ-ի ստեղծման գործընթացը: ՖԲ սոց ցանցում ստեղծվեց «ՄԷԿ ԿԱՂՐ» բարեկամների ակումբ՝ փակ խումբը, որտեղ ներգրավված կինոսիրողներն ու մասնագետները կամավոր հիմունքներով իրենց անձնական նվիրատվություններով ապահովեցին անհրաժեշտ դրամազույգը: Այս նախաձեռնությանը միացան ՌԲԵՆ հիմնադրամը, կինոգետներ՝ Ջավեն Բոյաջյանը, Րաֆֆի Մովսիսյանը, Շահանե Յուզբաշյանը, ռեժիսորներ՝ Արմինե Անդան, Գագիկ Ղազարէն, Ղիանա Կարդումյանը, Սեդա Գրիգորյանը, Սիլվա Չոբանյանը, Վահրամ Ակիմյանը, դերասանուհի՝ Գայանե Եղիազարյանը և լուսանկարիչ՝ Էդ Թադևոսյանը:

2015թ.-ին, դրամական ՖՈՆԴ-ը ձևավորվեց՝ ՌԲԵՆ հիմնադրամի (նախագահ՝ Էդվարդ Պալասանյան), Հայաստանի Ազգային Կինոկենտրոնի (տնօրեն՝ Գևորգ Գևորգյան)« ՈՍԿԵ ԾԻՐԱՆ միջազգային կինոփառատոնի (գլխավոր տնօրեն՝ Հարություն Խաչատրյան) և ՄԷԿ ԿԱՂՐ փառատոնի հիմնադիր ակտիվի նվիրատվությունների միջոցներով:

2016թ.-ին դրամական ՖՈՆԴ-ը ձևավորվեց՝ ՌԲԵՆ հիմնադրամի (նախագահ՝ Էդվարդ Պալասանյան), Հայաստանի Ազգային Կինոկենտրոնի (տնօրեն՝ Գևորգ Գևորգյան), ռեժիսորներ՝ Տաթև Հակոբյանի, Գագիկ Մադոյանի, Համլետ Վարդանյանի, Ղիանա Կարդումյանի, Սիլվա Չոբանյանի, դերասաններ՝ Գայանե Եղիազարյանի, Սաթենիկ Օհանյանի, Արթուր Շարոյանի, Օնիկ Ֆահրադյանի և ՄԷԿ ԿԱՂՐ փառատոնի նվիրատվությունների միջոցներով:

2017թ.-ին դրամական ՖՈՆԴ-ը ձևավորվել է ՌԲԵՆ հիմնադրամի (նախագահ՝ Էդվարդ Պալասանյան), Հայաստանի Ազգային Կինոկենտրոնի (տնօրեն՝ Գևորգ Գևորգյան) և ՄԷԿ ԿԱՂՐ ԿՖՄ Փառատոնի նվիրատվությունների միջոցներով:

26.06.2017, “ՄԷԿ ԿԱՂՐ” ԿՖՄՓ
ԵՐԵՎԱՆ, ՆՓԱԿ